

ԲՆԱԿԱՆՈՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՏԱՄ-ՊԱՐՈՂՈՆՏԱՅԻՆ ՓՈԽՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՉԱՅԵՑԱԿԱՐԳԸ

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ Լ.Յ.

Չայկական բժշկական ինստիտուտի մանկական ստոմատոլոգիայի ամբիոն, Երևան, Չայաստան

Չանձնված է՝ 02/25/2014 թ., ընդունված է՝ 07/14/2014թ.

Չիմսվելով հարուստ մասնագիտական գրական տվյալների և սեփական բազմակողմանի հետազոտությունների արդյունքների վրա, հողվածում հեղինակն առաջ է քաշում բնականոն պայմաններում և ախտաբանության ժամանակ ատամ-պարողոնտային փոխհարաբերությունների բավականին յուրատիպ իմունաբանական հայեցակարգ, որի հիմքում ընկած է ատամի էմալային սպիտակուցների աուտոանտիգենային բնույթը և դրանց նկատմամբ օրգանիզմի պատասխան ռեակցիայի առանձնահատկությունները՝ ատամների ծկթման, պարողոնտի հիվանդությունների և ատամների ծերունական արտանկման պրոցեսների ընթացքում:

Չայեցակարգը սխեմատիկ կերպով կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

1-ին փուլում տեղի է ունենում ատամի սաղմի էմալային օրգանի փոխանակային պահանջների ավելացում, որի արդյունքում զգալիորեն մեծանում է հարակից հյուսվածքներից այդ էպիթելային տեղամասը մեկուսացնող կենսաբանական թաղանթների թափանցելիությունը, ստեղծվում են պայմաններ դեպի կակղան էմալային անտիգենների ներթափանցման համար:

2-րդ փուլը բնութագրվում է օրգանիզմի պատասխան ռեակցիայով՝ էմալային անտիգենների ներթափանցման նկատմամբ, այսինքն «արտասնջրպետային» հյուսվածքի ֆիզիոլոգիական մեկուսացման խախտման նկատմամբ:

3-րդ փուլը ծկթման ուղու ձևավորման ու էմալային ուղղությամբ ատամի շարժման փուլն է: Այս պրոցեսի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ անտիգեն կրող հյուսվածքը չունի բջջային-անոթային համակարգ, հետևաբար ենթադրվում է, որ նրանից ներթափանցած անտիգենները նստում են ատամի շրջակա հյուսվածքային բաղկացուցիչների վրա և օրգանիզմի էֆֆեկտոր ռեակցիան ուղղվում է հենց նրանց դեմ (հյուսվածքների լիզիս): Սա իր հերթին պայմանավորում է իր հարեմալային հյուսվածքների ներծծումը՝ ատամի ծկթման համար անհրաժեշտ խողովակի ձևավորմամբ: Իսկ հարգագաթային շրջանի ձևաբանական ու ֆունկցիոնալ փոփոխությունները (հյուսվածքների առաջացում, ներհյուսվածքային ճնշման ավելացում և այլն) իրենց հերթին ապահովում են այն ուժերը, որոնք անհրաժեշտ են օտար մարմնի՝ ատամի դուրս մղման համար:

4-րդ փուլում տեղի է ունենում բերանի խոռոչի լորձաթաղանթի թափածակում և ատամի հետագա շարժում՝ դեպի կծվացքային հարթությունը (ատամնաշարերի հպման գիծը): Թափածակումը օրգանիզմի պատասխան ռեակցիայի գազաթնակետն է, որի ժամանակ բոլոր ներգրավված մեխանիզմները հասնում են առավել ակտիվության, ինչը որոշ հեղինակների թույլ է տվել այն բնութագրել որպես հիպերերգիկ ռեակցիա՝ իրեն համապատասխան կլինիկական դրսևորումներով (տենդ, լնդի բորբոքում և այլն):

Ըստ հեղինակի, այս նույն մեխանիզմն ընկած է նաև պարողոնտի տարածուն բորբոքային հիվանդությունների ու ատամների ծերունական արտանկման մեխանիզմների հիմքում, որոնք սակայն իրացվում են բոլորովին այլ պայմաններում և ունեն այլ ընթացք: